

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՅՈՒՋԱՆՆԱ ԳԱԳԻԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

**ԵՂԱՆԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՄԱՍՏԱՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԼՐԱԳՐԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ**

Ժ. 02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.թ., դոցենտ՝  
Մանուկյան Նահրա Հենրիկի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆեսոր՝  
Բաղդասարյան Հասմիկ Գրիգորի

բ.գ.թ., դոցենտ՝  
Մելիքսեթյան Ռոզա Սեդրակի

Առաջատար կազմակերպություն՝

Խ.Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական  
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2023 թվականի հոկտեմբերի 6-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար  
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Գայանե Մուրադյան

Արդի ժամանակներում աննախադեպ արագությամբ զարգացող և հարավփոփոխ աշխարհում հանրային կյանքի բնականոն և ներդաշնակ զարգացման համար, ի թիվս գիտական, քաղաքական, զեղարվեստական խոսույթների, առանձնակի նշանակություն է ձեռք բերում հանրային խոսույթների համատեքստում լրագրային խոսույթի լեզվաբանական քննության դերը, մասնավորապես, զուտ լեզվական իրողությունների և արտալեզվական իրականության համադրության տեսանկյունից: Նորանոր դրսևորումներ ստացող հանրային խոսույթի ամենատարբեր և բազմաբնույթ միջոցների թվում հիմնական դերը շարունակում է պահպանել լրագրային խոսույթը՝ որպես հանրային իրազեկման և լուսաբանման-տեղեկատվական աղբյուր:

Տեքստի լեզվաբանության ուսումնասիրության շրջանակներում ակներև է, որ իմաստաստեղծման և իմաստաընկալման ընթացքը հաճախ պայմանավորվում է առանձին ասույթների ներագողական ուժով: Վերջիններս, իրացնելով լեզվական միջոցների հիմնական տեղեկատվական-վերաբերային գործառույթը, միաժամանակ միտված են փոխելու իրականությունը՝ ներգործելով մարդկային հույզերի և պատկերացումների վրա:

Այս պայմաններում կարևոր նշանակություն ունի կարողանալ կողմնորոշվել չափազանց հարաշարժ մեդիադաշտում՝ փորձելով տարանջատել անաչառ և արժանահավատ տեղեկատվությունն ու անկողմնակալ վերլուծությունները մտացածին և մտաշահարկման նպատակ ունեցող խոսույթից:

Այս տեսակետից անհերքելի հետաքրքրություն է ներկայացնում եղանակավորության լեզվական միջոցների ուսումնասիրությունը: Վերջինս նախևառաջ նպատակ ունի վերհանել լեզվական իրողությունների և արտալեզվական իրականության միջև գոյություն ունեցող հարաբերակցությունը: Անաչառ և անկողմնապահ լրատվությունը, ձգտելով ճշմարիտ և արժանահավատ տեղեկատվություն տարածել, մնալով ալեթիկ եղանակավորման սահմաններում, որը մեր ուսումնասիրության շրջանակներում դրսևորվում է որպես փաստական եղանակավորում, այդուհանդերձ անխուսափելիորեն տեքստի ներակա մակարդակում բացահայտում է հողվածագրի դիրքորոշումն ու դիտավորականությունը, վերհանում նրա ներգրավածության աստիճանը տեքստային հյուսվածքի մեջ, ինչն էլ պայմանավորում է ներկայիս ուսումնասիրության **արդիականությունը**:

Այսպիսով՝ ներկայիս ատենախոսության **նպատակն է** բացահայտել լրագրային խոսույթի ներակա մակարդակում գոյություն ունեցող ասույթային դիրքորոշման (positionnement énonciatif) լեզվական դրսևորումները և դրանց եղանակավորող նշանակությունը հանրության համար կարևորագույն խնդիրներին առնչվող հանրային խոսույթում:

Ուսումնասիրության նպատակը իրականացնելու համար անհրաժեշտ ենք համարել պատասխանել հետևյալ **հարցադրումներին**.

- Որո՞նք են փաստական, իմացական, հորդորական և սուբյեկտիվ-գնահատողական եղանակավորման միջոցները տեքստի արտակա և ներակա մակարդակներում:
- Որո՞նք են եղանակավորության՝ որպես տեքստային կարգի հիմնական դրսևորումները իմաստաստեղծման և իմաստաընկալման տեսակետից:
- Որո՞նք են լրագրային խոսույթի համար անհրաժեշտ հեղինակային չեզոքության լեզվական նախապայմանները և բնութագրերը:
- Ինչպե՞ս են առնչվում սուբյեկտիվ-գնահատողական և հորդորական եղանակավորությունները խոսույթի ներագողական գործառույթի տեսակետից:
- Ինչպե՞ս են առնչվում ուսումնասիրվող եղանակավորության տիպերը ճշմարիտ և ոչ ճշմարիտ երկատման տեսանկյունից:
- Որո՞նք են ֆրանսիական լրագրային խոսույթին բնորոշ հատկությունները:
- Ինչպե՞ս են առնչվում իրազեկման, հաղորդման և լուսաբանման գործառույթները գրավոր մամուլում արձանագրվող երկխոսային բնույթի հետ:
- Ինչպիսի՞ն են ֆրանսալեզու լսարանի հավաքական կերպարի լեզվական բնութագրիչները տեքստի արտակա և ներակա մակարդակներում և դրանց առնչությունը եղանակավորության հետ:

Ատենախոսության ուսումնասիրության **օբյեկտը** եղանակավորության հիմնական տիպերի լեզվական դրսևորումներն են լրագրային խոսույթում: Վերջինս, դիտարկվելով որպես հանրային խոսույթը ձևավորող և տարածող հիմնական միջոց, բնութագրվում է իրեն ներհատուկ հակասականությամբ: Մի կողմից ենթարկվում է մասնագիտական վարքականոններով թելադրվող չեզոքության պահանջներին, իսկ մյուս կողմից՝ լեզվախոսությանը բնորոշ ներքին անքակտելի սուբյեկտիվության: Այդ իսկ պատճառով մեր ուսումնասիրության **առարկան է**, մասնավորապես, լրագրային խոսույթի արտակա և ներակա եղանակավորման հիմնական իմաստաշարահյուսական միջոցների քննությունը և դրանց իմաստագործառական և իմաստագործաբանական արժեքների բացահայտումը: Հետազոտության ընթացքում քննության են առնվել եղանակավորման հիմնական չորս տիպերի, այն է՝ ալեթիկ, դեոնթիկ, էպիսթեմիկ և սուբյեկտիվ-գնահատողական եղանակավորման միջոցները համապետական և ռեգիոնալ կարևորություն ունեցող ժամանակակից ֆրանսիական մամուլում: Նշենք, որ մեր հետազոտության ընթացքում, հաշվի առնելով տվյալ եղանակավորման միջոցների իմաստային հազեցվածությունը, հարկ ենք համարել *ալեթիկ*,

դեռնթիկ և էպիսթեմիկ եղանակավորումների դեպքում անդրադառնալ համապատասխանաբար **փաստական, հորդորական և իմացական եղանակավորումների** դրսևորումներին:

Աշխատանքի ընթացքում կիրառվել են անվանագիտական, իմաստաբանական, բաղադրիչային, համադրության, համատեքստային վերլուծության, ինչպես նաև բառարանային սահմանումների վերլուծության **մեթոդները**:

Ուսումնասիրության **փաստական նյութը** ֆրանսիական ամենահեղինակավոր օրաթերթերի և ամսագրերի առաջնորդող հոդվածներն ու ռեզիոնալ նշանակության թերթերի տեղեկատվական նպատակ ունեցող հոդվածներն են (L'Express, Le Monde, Le Point, Marseille/infos):

**Աշխատանքի գիտական նորույթն է** ֆրանսիական ժամանակակից լրագրային խոսույթում արձանագրվող եղանակավորության հիմնական տիպերի և դրանց լեզվական դրսևորումների բացահայտումը իմաստագործաբանական քննության միջոցով՝ հիմնված տեքստի արտակա և ներակա մակարդակների համադրության վրա՝ հեղինակ-տեքստ-ընթերցող հաղորդակցական շղթայում:

**Ուսումնասիրության տեսական նշանակությունը** պայմանավորված է լրագրային խոսույթում եղանակավորման տեքստային կարգի քննությամբ, որն իրականացվել է արդի լեզվաբանության մեջ կարևորագույն նշանակություն ունեցող իմաստագործառական, իմաստագործաբանական, ինչպես նաև ասության լեզվաբանության ու նշանագիտության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների հիման վրա:

Ուսումնասիրության **գործնական** նշանակությունն է իրականացված հետազոտության արդյունքների կիրառման հնարավորությունը ֆրանսերենի դասավանդման տեսական և գործնական դասընթացներում, ինչպես նաև լրագրային խոսույթի իմաստաստեղծման օրինաչափությունների վերլուծություններում:

**Ատենախոսությունը բաղկացած է** ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության, սկզբնաղբյուրների և էլեկտրոնային աղբյուրների ցանկերից:

**Առաջին գլուխը («Եղանակավորության լեզվաբանական հայեցակերպը»)**, որը բաղկացած է վեց ենթագլուխից, նվիրված է հայ, ռուս և ֆրանսալեզու լեզվաբանների (Մ. Աբեդյան, Հ. Պետրոսյան, Գ. Ջահուկյան, Ի. Գալֆերին, Բ. Րուդնև, Դ. Սոլգանիկ, Յ. Կրաբա, Ե. Դյուբուայ, Բ. Բրունո, Շ. Բալլի, Մ. Գրևիս, Բ. Շարաուդա, Ա. Ռաբատել) աշխատություններում եղանակավորության ուսումնասիրությանը վերաբերող հարուստ ավանդույթին, մասնավորապես, շարահյուսական, իմաստագործառական, իմաստագործաբանական և նշանագիտական ուսումնասիրության մակարդակներում:

Առաջին ենթագլուխը վերնագրված է «Եղանակավորությունը որպես լեզվափիլիսոփայական կարգ»: Հատկանշական է, որ լեզվափիլիսոփայական տեսանկյունից եղանակավորումը բնութագրվում է որպես օբյեկտիվ իրականության մասին դատելու կամ վերջինս ընկալելու միջոց, ընդ որում մոդալ տրամաբանության համաձայն, համարվում է, որ բայի եղանակն է այն հիմնական միջոցը, որով դրսևորվում են գիտակցության երեք պարտադիր գործառույթները. արժեքային-գնահատողական, ճանաչողական և նորմատիվ: Այդուհանդերձ, ակնհայտ է, որ լեզվական եղանակային ձևերը, սահմանափակ լինելով, խոսքում կարող են անսահման իմաստներ ձեռք բերել: Միաժամանակ նշենք, որ արդի ուսումնասիրություններում քննվում են մոդալ տրամաբանության հարաբերական, այն է՝ ոչ բացարձակ եղանակավորության դրսևորումները, որի դեպքում հիմնական մոդալ բնութագրիչները կարող են իմաստավորվել այլերիկ, էպիսթեմիկ և դեոնթիկ եղանակավորությանների տրամաբանության սահմաններում:

Երկրորդ ենթագլխում («Եղանակավորության լեզվական դրսևորման հիմնական մակարդակները») տարանջատվում են **եղանակավորություն և եղանկավորում** հասկացությունները. եթե առաջինը վերաբերում է տեքստում արձանագրվող անփոփոխ իրականությանը, ապա երկրորդի միջոցով ասության սուբյեկտն իր վերաբերմունքն է դրսևորում ոչ միայն արտալեզվական իրականության, այլև իր կողմից արտահայտած ասության հանդեպ<sup>1</sup>: Այս ենթագլխում քննության են առնվում եղանակավորության ուսումնասիրության ձևաբանական, շարահյուսական և տեքստային մակարդակները, առանձնակիորեն շեշտադրվում է եղանակավորող բառերի և եղանականիշ բայաձևերի ուսումնասիրությունը:

Կարևորագույն նշանակություն ունի **տեքստային քննության մակարդակը**: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղեկատվական անփոփոխակի տեսակետից տեքստը միատարր է, այդուհանդերձ, անհրաժեշտ է բացահայտել առանձին հատույթների իմաստագործաբանական արժեքը՝ տեքստի եղանակավորման դինամիկ կառույցը քննելու նպատակով: Վերջինիս բացահայտ մակարդակում առկա եղանակավորիչների իմաստագործաբանական վերլուծությունը համադրվում է լայն մշակութային համատեքստով պայմանավորվող ներակա իմաստների հետ:

**Անվանագիտական ուսումնասիրությունը** հնարավորություն է ստեղծում բացահայտել լրագրային խոսույթում արտահայտված եղանակավորման կարգի առավել բնորոշ իմաստները, մասնավորապես, հավաստիությունը/անհավաստիությունը, անհրաժեշտությունը, հնարավորությունը/

---

<sup>1</sup> Arrivé, M., Gadet, F., Galmiche, M. La Grammaire d'aujourd'hui: Guide alphabétique de linguistique française, Paris: Flammarion, 1986, p. 389.

անհնարինությունը, ենթադրականությունը, հավանականությունը և անհավանականությունը:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում («Շղանակավորության բառաքերականական միջոցների քննությունը արդի լեզվաբանության համատեքստում») անդրադարձել ենք եղանակավորության ուսումնասիրությանը՝ հիմք ընդունելով Շ. Բալլիի մոդուս/դիկտում երկատումը, որն իր հետագա զարգացումն է գտել Ժ. Դյուբուայի, Ժ.-Լ. Գարդիի, Ա. Կյուլիոլիի, Պ. Շարոդոյի, Վ. Վինոգրադովի, Գ. Սուլցանիկի, Է. Ադայանի, Հ. Պետրոսյանի և այլոց աշխատություններում: Արդի լեզվաբանության զարգացման միտումների տեսակետից առանձնակի կարևորություն է ստանում ֆրանսիական ասության լեզվաբանության տեսությունը, որի շրջանակներում առաջարկված **ասույթ (énoncé)** և **ասություն (énonciation)** եզրույթների արգասաբերությունը փաստվում է մասնավորապես Ռ. Յակոբսոնի, Է. Բենվենիստի, Օ. Դյուկրոյի, Ա. Կյուլիոլիի, Կ. Կերբրա-Օրելիոնիի հետազոտություններում:

Չորրորդ ենթագլխում («Շղանակավորման ուսումնասիրությունների իմաստագործաբանական հայեցակերպը») ուսումնասիրվում է խոսողական ակտերի առանձնահատկությունների շրջանակում դիտարկվող ֆրանսիացի հայտնի լեզվաբան Պ. Շարոդոյի տեսությունը՝ Մ. Բախտինի, Դ. Մենզլեյի մոտեցումների համադրությամբ<sup>2</sup>: Խոսողական ակտերի առանձնահատկությունների շրջանակում դիտարկվող եղանակավորումը Պ. Շարոդոն անվանում է **ասությանի եղանակավորում** և շարկապելով Ջ. Օստինի խոսողական ակտերի տեսությանը՝ առանձնացնում է երեք տիպի խոսողական ակտ.

- **Արտաքին պարտադրանքի եղանակավորման խոսողական ակտ (acte allocutif)** (բանախոսը իր խոսակցին ներգրավում է իր խոսքային ակտի մեջ և նրան պարտադրում որոշակի վարքագիծ):
- **Ներքին պարտադրանքի եղանակավորման խոսողական ակտ (acte élocutif)** (ասության սուբյեկտը կառուցում է իր խոսքը իր իսկ կողմից կատարվող, կատարված կամ կատարվելիք գործողության տեսանկյունից):
- **Չեզոք դիրքորոշման եղանակավորման խոսողական ակտ (acte délocutif)** (հաղորդակցության անդամները ձևական առումով ընդգրկված չեն ասության ֆորմալ, լեզվական կառույցի մեջ):

Հինգերորդ ենթագլխում («Շղանակավորությունը որպես իմաստագործառական կարգ») կատարած ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ եղանակավորումը պատկանում է այնպիսի երևույթների

---

<sup>2</sup> Charaudeau, P. Grammaire du sens et de l'expression, Paris: Hachette, 1992, p. 575.

շարքին, որոնք ունեն լեզվափիլիսոփայական և լեզվամշակութային բնույթ, հետևաբար եղանակավորության լեզվական դրսևորումները կարելի է բնութագրել միայն տեքստում: Ըստ Ջ. Տուրանայի՝ տեքստը հեղինակի աշխարհի պատկերի օբյեկտիվացման և հասցեատիրոջ՝ ընթերցողի աշխարհի պատկերի վրա ներագդելու միջոց է: Դա համապարփակ հասկացական և տեքստային կարգ է, որը ներառում է հեղինակի նպատակային հաղորդակցական դիտավորությունը և գնահատողական վերաբերմունքը<sup>3</sup>:

Վեցերորդ ենթագլխում («Եղանակավորության ուսումնասիրության նշանագիտական հայեցակերպը») ներկայացվում են եղանակավորության ուսումնասիրությունների նշանագիտական մոտեցումները: Ա. Գրեյմասի և Ժ. Կուրտեսի նշանագիտական մոտեցումները թույլ են տալիս բացահայտել եղանակավորության լեզվական դրսևորումները իմաստաստեղծման ներունակային, առկայացման և իրականացման մակարդակներում: Այս համատեքստում կարևորվում են *vouloir, devoir, pouvoir, savoir* բայերով արտահայտված իմաստային արժեքները, որոնք իրենց հերթին հաղորդակցության անդամներին՝ խոսքի հեղինակին և հասցեատիրոջը, տեղակայում են գոյության կամ գործողության իմաստային դաշտերում, այն է՝ *être* և *faire* բայերի տիրույթում, իսկ լրագրային խոսույթի պարագայում, հատկապես իրազեկման *faire-savoir* և *faire-croire*, այն է՝ իրազեկման և ներգործման գործառույթների համատեքստում:

**Երկրորդ գլուխը («Ֆրանսիական լրագրային խոսույթի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները»)** կազմված է երկու ենթագլխից: Առաջին ենթագլուխը («Ֆրանսիական մամուլի պատմության համառոտ նկարագրությունը՝ ազատության և պատասխանատվության սկզբունքների հոլովույթում») նվիրված է ֆրանսիական լրագրության ավանդույթների ուսումնասիրությանը և զարգացման հիմնական միտումներին, ինչպես նաև անաչառ և օբյեկտիվ լրագրության նախապայման հանդիսացող մասնագիտական բարեվարքության հիմնական վարքականոններին և լրագրության գործառույթներին:

Երկրորդ ենթագլխում («Լրագրային խոսույթի վերլուծության ֆրանսիական ավանդույթի հիմնարար մոտեցումները») ուսումնասիրվում են ժամանակակից ֆրանսիական գրավոր մամուլում ընդունված հիմնական ժանրերը և դրանց լեզվաոճական գլխավոր առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարվում լրագրողի լեզվական ինքնության կամ *լրագրողական էթոսի* լեզվական դրսևորումներին տեքստի ներակա մակարդակում. վերջիններս

---

<sup>3</sup> Тураева, З.Я. От мастерства писателя к открытиям читателя. В поисках сущности текста // *Вестник РУДН*, серия Лингвистика, том 20, № 1, М.: URSS, 2016, с. 117-123.



սովորաբար բացահայտում են հողվածագրի՝ իբրև մասնագիտական համայնքի ներկայացուցչի վերաբերմունքը արժարժվող խնդրի նկատմամբ, երբեմն էլ միտում ունեն ընդգծելու նրա անձնական ներդրումը, դերն ու նշանակությունը մասնագիտության մեջ: Ակներև է, որ լրագրային խոսույթը միտված է ոչ միայն ներկայացնելու հանրային կյանքի իրական պատկերը, այլև մեծ մասամբ այն փոխելու: Ֆրանսիացի ժամանակակից լեզվաբան և նշանագետ Ժ. Կուրտեյը, մասնավորապես, գրում է. «Ցանկացած ասություն այնպիսի խոսքային ակտ է, որի նպատակն է փոփոխել գոյություն ունեցող իրավիճակը»<sup>4</sup>:

**Երրորդ գլուխը** («Եղանակավորման արտակա և ներակա դրսևորումները ժամանակակից ֆրանսիական մամուլում») նվիրված է եղանակավորությանն առնչվող իմաստային դրսևորումների լեզվական արտահայտություններին, ինչպես նաև լեզվական միավորների եղանակավորող արժեքներին: Այն կազմված է յոթ ենթագլխից:

Առաջին ենթագլուխը («Ալեթիկ եղանակավորման արտակա և ներակա դրսևորումները») նվիրված է տեքստի բացահայտ և ոչ բացահայտ մակարդակներում հեղինակի հաղորդակցական մտադրության լեզվական դրսևորումների քննությանը: Ուսումնասիրության նյութի լեզվագործաբանական քննությունը տեքստի մակարդակում թույլ է տալիս փաստել, որ թեպետ լրագրողը գործում է **ալեթիկ** եղանակավորման սահմաններում առանձին ասույթների պարագայում, այդուհանդերձ տեքստի ոչ բացահայտ մակարդակում իրացնում է **դեռնթիկ** եղանակավորման գործառույթ՝ հորդորելով ընթերցողին խորհել և գտնել բազմաթիվ հարցերի պատասխաններ:

Օրինակ

*Mais, derrière cette activité diplomatique classique, l'attitude de Moscou laisse perplexe. Quel intérêt aurait la Russie à laisser faire l'offensive de l'Azerbaïdjan et de son parrain turc, dans une zone aussi sensible que le Caucase du Sud ? Punir Nikol Pachinian, le dirigeant arménien, pas assez prorusse ? C'est renverser l'ordre des priorités. La géopolitique et le choc des puissances importent davantage, pour Poutine*<sup>5</sup>.

Այսպիսով՝ նմանատիպ հարցադրումներով, ըստ մեջբերվող հողվածի հեղինակի, փորձ է արվում գերտերությունների կողմից գլխիվայր շրջել առաջնահերթությունների կարևորությունը, քանի որ նրանց համար ավելի մեծ նշանակություն ունեն աշխարհաքաղաքականությունն ու ուժերի առձակատումը, քան խնդրի լուծումը: Այս համատեքստում ակնհայտ է հարցական նախադասությունների սուբյեկտիվ-գնահատողական արժեքը,

---

<sup>4</sup> Courtés, J. Analyse Sémiotique du Discours: De l'énoncé à l'énonciation, Paris: Hachette, 1991, p. 12.

<sup>5</sup> Le Monde: 07/10/2020.

որոնք տեքստի ներակա մակարդակում օժտվում են երկխոսելու հորդոր արտահայտող դեռնթիկ եղանակավորությամբ:

Երկրորդ ենթագլխում («Լրագրողական էթոսի ներակա դրսևորումները տեքստի մակարդակում») անդրադարձ է կատարվում սուբյեկտիվ գնահատողական եղանակավորության լեզվական դրսևորումներին, այն է՝ լրագրողի դիրքորոշման բացահայտմանը տեքստի ներակա մակարդակում: Իրացնելով ասույթային չեզոքության պահանջը, որը բնորոշ է լրագրային ոճին, հեղինակը օգտագործում է եղանակավորման այնպիսի հնարներ, որոնց շնորհիվ տպավորություն է ստեղծվում, որ նա խոսում է ողջ հանրության անունից, որը ծարավ է ճշմարիտ խոսքի:

Օրինակ՝ *... des vérités qu'on aimerait entendre sortir des bouches autorisées<sup>6</sup>...*

*On* անորոշ դերանունը այս դեպքում օգտագործվում է *nous* (*մենք*) իմաստով, որի միջոցով հեղինակը խոսում է բոլորի անունից, նշանակում է նաև ընթերցողի: Նշենք, որ այս հատվածում արձանագրվում է ներքին պարտադրանքի եղանակավորություն: Այս դեպքում եղանակավորիչների դերում կարող են հանդես գալ *on* և *nous* դերանունները:

Երրորդ ենթագլուխը («Եղանակավորության բազմիմաստության դրսևորումները լրագրային խոսույթում») նվիրված է լեզվական բազմաձայնության իմաստագործաբանական քննությանը: Այս տեսակետից եղանակավորման բազմիմաստության հիմնական միջոցներից է ուրիշի փոխանցված խոսքը: Հեղինակավոր որևէ աղբյուրի կատարված հղումները ապահովում են տեղեկատվության նկատմամբ լրագրողի անաչառ վերաբերմունքը տեքստի բացահայտ մակարդակում: Մամուլում հրապարակված հոդվածներում մեջբերման օգտագործումը տեղեկատվության ճշմարտացիության հիմնական գրավականներից է: Լրագրողը, օգտագործելով չակերտների մեջ վերցված ուրիշի խոսքից առանձին արտահայտություններ, տեքստի ներակա մակարդակում իր սուբյեկտիվ-գնահատողական վերաբերմունքն է արտահայտում նման արձագանքների նկատմամբ: Օրինակ՝ «դեղին բաճկոնների» հանրային բողոքը մեղմելու համար Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնի կողմից հանրությանն ուղղված նամակի կապակցությամբ հրապարակված առաջնորդող հոդվածում լրագրողը գրում է.

*Avant même que le grand débat national engagé par le président de la République ait commencé et à peine connue la lettre qu'il a adressée aux Français pour en fixer le cadre, des voix nombreuses ont récusé cette démarche sans précédent. Qu'elles soient celles de « gilets jaunes » ou de représentants des partis d'opposition, elles concluent dès*

---

<sup>6</sup> L'Express: 05/06/2013.

*à présent, le plus souvent de façon péremptoire, que cette consultation sera du «bla-bla», du «baratin», de «l'enfumage», un «expédient» ou un artifice de «communication»<sup>7</sup>.*

Այս հատվածում իմաստագործաբանական բազմաձայնությունը դրսևորվում է ընդդիմադիր ցուցարարների կողմից օգտագործվող և լրագրողի կողմից մեջբերվող «bla-bla», «baratin», «l'enfumage», «expédient», un artifice de «communication» արտահայտությունների միջոցով, որոնք, պատկանելով խոսակցական ոճին, նպատակ ունեն հնչեցնելու հասարակ մարդկանց բողոքի ձայնը՝ իրացվելով որպես փաստական եղանակավորության ցուցիչներ: Մակայն, համակցվելով *de façon péremptoire, dès à présent* մակբայական դարձվածքների և *recuser* բայի հետ, ակնհայտ են դարձնում, որ հողվածագիրը չի կիսում ցուցարարների թերահավատությունը, քանի որ նրանք կտրականապես դեմ են ցանկացած փոփոխության և հույս չեն տածում բանավեճի նկատմամբ:

Չորրորդ ենթագլխում («Դեռնթիկ եղանակավորության արտակա և ներակա դրսևորման մակարդակները») ուսումնասիրվում են լրագրային խոսույթում գործաբանական ներգործության իմաստաշարահյուսական միջոցները: Տեքստի բացահայտ մակարդակում արձանագրվում են *devoir, falloir* և *pouvoir* բայերի կիրառությունը՝ արտահայտված *indicatif, conditionnel, subjonctif* եղանակաձևերի միջոցով, ձայնարկություններ և անդեմ դարձվածքներ, փոխաբերություններ, հոետորական հարցեր, իսկ ոչ բացահայտ մակարդակում սուբյեկտիվ գնահատողական արժեք արտահայտող լեզվական եղանակավորիչներ, որոնց թվում դասվում են արժեաբանական բնույթի ածական և գոյական անուններ, բացասական հարանշանակություն ունեցող լեզվական միավորներ, *on* և *nous* դերանուններ: Անդրադառնանք սահմանական եղանակի գործածությանը *devoir* բայի գուգորդմամբ, որը, ինչպես հայտնի է, եղանակավորող բայ է և արտահայտում է մեծ մասամբ պարտադրանք՝ հրամայական եղանակի միջոցով: Նշենք, որ Քրոնինգը անդրադառնում է այս բայի եղանակային այլ արժեքներին: Ըստ նրա *devoir* բայը արտահայտում է լինելու անհրաժեշտություն (*nécessité d'être*), այն է՝ ալեթիկ իմաստ, սակայն ունենում է նաև էպիսթեմիկ եղանակավորություն, բայց ի տարբերություն վերջինիս՝ ճշմարիտ և հավաստի իրողությունների մասին է փաստում: Ավելին՝ ալեթիկ իմաստով *devoir* բայը արտահայտում է «բացարձակ» անհրաժեշտություն, մինչդեռ էպիսթեմիկ իմաստով *devoir*-ը նշանակում է հավանականություն<sup>8</sup>: Այսպիսով՝ *devoir* բայը, լինելով բազմիմաստ, ներակա մակարդակում ունի ալեթիկ և դեռնթիկ եղանակավորություն արտահայտելու հնարավորություն:

<sup>7</sup> Le Monde: 14/01/2019.

<sup>8</sup> Kronning, H. Pour une tripartition des emplois du modal «devoir» // *Cahiers Chronos* 8, 2001, pp. 67-84.

Օրինակ՝

*La moitié des Français sont méfiants vis-à-vis de la campagne de vaccination et n'envisagent pas de se protéger du virus. C'est pourtant la seule solution pour nous immuniser rapidement et de manière collective.*

*Dissuader les autres de le faire, c'est retarder la fin de la pandémie. Même si chacun **doit** prendre une décision selon ses convictions, sa situation et surtout ses peurs. Il est temps de passer à autre chose. L'année 2021 **doit** prendre sa revanche sur l'année écoulée et tourner la page noire au plus vite.*

Այս հատվածում *devoir* բայի եղանակային դրսևորումը բացահայտվում է համատեքստի մակարդակում, դիցուք այս պարագայում այն ունի նաև սուբլեկտիվ-գնահատողական արժեք, քանի որ հողվածագիրը տվյալ բայի միջոցով արտահայտում է համավարակը մոտակա ժամանակներում հաղթահարելու հույսը: Սահմանական եղանակն այս դեպքում ունի ընդգծված հորդորական եղանակավորման արժեք, քանի որ բացահայտում է հանրության մեջ գոյություն ունեցող կասկածամտության իրական պատճառները և անուղղակիորեն հորդորում պատվաստվելու:

Հետևյալ պարբերությունը հետաքրքրական է պայմանական և ըղձական եղանակների օգտագործման տեսանկյունից:

*Mais **il ne faudrait pas** que ce regard sévère porté sur ceux qui nous gouvernent ne nous **fasse perdre** de vue l'essentiel. Nous **devons** éradiquer ce virus en nous immunisant collectivement. Et la solution la plus rapide est le vaccin.*

*L'année écoulée nous a tous profondément plongés dans une anxiété, sûrement plus qu'on ne l'imagine nous-même. Il n'y a rien de honteux à ce que cette angoisse **ressurgisse** de manière viscérale, au moment où nous **devons** nous engager, chacun, dans un processus individuel de vaccination<sup>9</sup>.*

Հողվածագիրը *falloir* բայը օգտագործում է պայմանական եղանակով: Հայտնի է, որ պայմանական եղանակը հաճախ օգտագործվում է հավանականություն արտահայտելու կամ վարկած առաջարկելու համար: Այս եղանակը լրագրային խոսույթում երբեմն թույլ է տալիս հողվածագրին գերծ մնալ տեղեկատվության համար պատասխանատվությունից, սակայն տվյալ օրինակում *il ne faudrait pas* կառույցը ընկալվում է իբրև նրբանկատ հորդոր ըղձական եղանակով արտահայտված *ressurgir* բայի համատեքստում:

Հինգերորդ ենթագլուխը («Եղանակավորող բառերն ու արտահայտությունները որպես հեզնանքի դրսևորման միջոց արդի ֆրանսիական մամուլում») նվիրված է հեզնանք արտահայտող եղանակավորող բառերի ու արտահայտությունների իմաստաբանական և գործաբանական հարթությունների ուսումնասիրությանը մասնավորապես քննության է

---

<sup>9</sup> Lyon capitale: 22/12/2020.

ենթարկվում եղանակավորիչների ներունակային բազմիմաստությունը: Ինչպես հայտնի է, խոսքը հեզնական է, երբ անձերին ու առարկաներին վերագրվում են այնպիսի հատկանիշներ, որոնցից նրանք զուրկ են: Մովորաբար ծաղրական է ձևի և բովանդակության անհամապատասխանությունը, և հեզնանքը կառուցվում է հենց այդ սկզբունքի հիման վրա: Ինչպես նշում է Ֆ. Շանդիյուն, դասական իմաստով հեզնանքը համարվում է հակաբանության ոճական հնարք: Խոսողը գիտակցաբար հեզնանք արտահայտող բառը գործածում է հակառակ իմաստով՝ ի նշան անհամաձայնության: Այն կարող է դրսևորվել վերամբարձության, չափազանցության, ընդգծված հակադրության, կեղծ փաստարկի միջոցով<sup>10</sup>:

Հեզնանքի միջոցով հեղինակը վեր է հանում առկա երևույթների անընդունելի, մերժելի ու բացասական կողմերը և դրանով իսկ իր վերաբերմունքն արտահայտում անձի կամ երևույթի նկատմամբ:

Օրինակ՝

*La Commission parle désormais aux États, comme le fait le Fonds monétaire international à propos de pays dit «du tiers monde». Et elle spécifie ce qu'elle veut dire. Ainsi, le «réexamen des postes de dépense dans tous les secteurs d'administration publique à prendre, dans le cadre de la loi de décentralisation», programme l'étranglement des communes... **Bref, le travail est le grand ennemi** de la Commission au service des puissances financières.*

Հետաքրքրական է *pouvoir* եղանակավորիչի բազմիմաստությունը, որի միջոցով կարելի է արտահայտել գործողություն կատարելու կարողություն, հնարավորություն, հավանականություն, անհրաժեշտություն, պարտավորություն և այլն: Ներքոնշյալ օրինակում հոդվածագիրը *pouvoir* բայի միջոցով փորձել է արտահայտել իրողության հավանականությունը.

*Lorsque nous avons publié «Le pacte des rapaces» qui décryptait le pacte dit «Europlus», entre Mme Merkel et M. Sarkozy, certains **ont pu** penser que nous exagérons. Malheureusement, tel n'était pas le cas. La Commission de Bruxelles vient d'en administrer la preuve. En application des procédures de surveillance des États, **elle ordonne à la France d'aller encore plus loin dans la destruction des droits économiques et sociaux**<sup>11</sup>.*

Մեջբերված օրինակներում հեզնական վերաբերմունքը դրսևորվում է դրական և բացասական հարանշանակային արժեք ունեցող լեզվական միավորների համատեղումով միևնույն ասույթում. *travail // grand ennemi, ordonner // destruction des droits*:

Վեցերորդ ենթազվխում («Եղանակավորող բայերի կիրառությունը լրագրողական խոսույթում») ուսումնասիրվում են *pouvoir* և *devoir*

<sup>10</sup> Jeandillou, J-F. L'analyse textuelle. Paris: Arman Collin/Masson, 1997, p. 79.

<sup>11</sup> <https://patrick-le-hyariac.fr/union-contre-les-ordres-de-bruxelles/>

եղանակավորիչների իմաստային անցումները և փոխարկելիության հնարավորությունները: Եղանակավորման նշանագիտական քննության տեսակետից գործողության իրականացումը պարտադիր անցնում է ներունակության և առկայացման փուլերով, ըստ այդմ, նշյալ եղանակավորիչները կարող են դիտվել որպես *faire* բայի իմաստային ծավալի բաղադրիչներ, իսկ եղանակավորման տեսանկյունից՝ բազմարժույթ եղանակավորման միջոցներ:

Յոթերորդ ենթագլխում («Հավելիմաստային արժեքի և եղանակավորման խնդիրը լրագրային խոսույթում») ուսումնասիրվում են սուբյեկտիվ-գնահատողական եղանակավորման բազմաբնույթ միջոցները և դրանց գործաբանական արժեքը՝ հավելիմաստային ընդգծված դրական հարանշանակություն ունեցող գոյական և ածական անունների, *nous* դերանվան և հարցական նախադասությունների կիրառության միջոցով: Հատկանշական է, որ ուսումնասիրված ռեգիոնալ կարևորություն ունեցող հոդվածներում հորդորական եղանակավորումը արդյունավետ հաղորդակցության նպատակ է հետապնդում՝ ձգտելով ներգրավել հանրության ամենալայն զանգվածներին և կիսել նրանց հետ պատասխանատվությունը իրականացվող բոլոր ծրագրերում: Ներակա մակարդակում արձանագրվող շարահյուսական բնույթի եղանակավորիչները (ուրիշի փոխանցված խոսք, հռետորական հարց) ունեն արտաքին պարտադրանքի հորդորական եղանակավորման արժեք: Եթե զուտ իրազեկման նպատակ հետապնդող հոդվածները հասկորոշվում են սահմանական եղանակի միջոցով արտահայտված փաստական եղանակավորմամբ, ապա հաղորդակցման նպատակով գրված հոդվածների ներակա մակարդակում արձանագրվում են հորդորական եղանակավորման դրսևորումներ, որոնք արտահայտվում են ի թիվս եղանակավորման տարբեր միջոցների մասնավորապես հավելիմաստային արժեք ունեցող բառային միավորներով:

Օրինակ՝

*... le basket-ball **risque de subir un regain d'intérêt** dans notre pays, mais aussi dans notre ville – pourtant **terre de football**. En ce qui nous concerne en mairie de secteur, nous n'avons pas attendu le succès et la surmédiatisation du jeune **prodige** français pour s'intéresser à ce sport d'équipe encore confidentiel dans **notre cité phocéenne** et de lui trouver **une place de choix** dans les activités proposées au sein de notre service animation. Le développement du sport dans nos quartiers est une priorité qui s'est notamment traduite par la création du complexe Beausoleil. C'est pourquoi **je prends la balle au rebond** et vous invite à lire le dossier dont fait l'objet ce club dans les pages suivantes<sup>12</sup>.*

---

<sup>12</sup> Marseille/infos: mai, 2004.

Մեջբերվող հատվածում սուբյեկտիվ-գնահատողական եղանակավորումն արտահայտվում է *terre de football* փոխաբերության միջոցով, քանի որ Մարսել քաղաքը, ըստ հեղինակի, ֆրանսիական ֆուտբոլի զարգացման հիմնական կենտրոններից է: *Risquer* բայը այս համատեքստում ունի ակնհայտ բացասական հավելիմաստային արժեք, քանի որ արտահայտում է հողվածագրի մտավախությունները հնարավոր վտանգավոր զարգացումների վերաբերյալ: Սուբյեկտիվ-գնահատողական եղանակավորիչ է *cit e phoc enne* հարասույթը, որի միջոցով հողվածագիրը կարևորում է Մարսել քաղաքի բնակիչների հավատարմությունն իրենց ավանդույթներին՝ տեքստի ներակա մակարդակում կոչ անելով պաշտպանել դրանք: Հղում անելով տեքստի ներակա մակարդակում սպորտի բազմադարյան պատմությանը՝ քաղաքապետարանի անունից հանդես եկող հողվածի հեղինակը հանձն է առնում ապահովելու առանձնաշնորհյալ տեղ իրենց քաղաքում ֆուտբոլի զարգացման համար: Այս տեսակետից *une place de choix, jeune prodige, priorit e, succ es* լեզվական միավորները ողջ տեքստի մակարդակում ներառվում են *prendre la balle au rebond = relever le d efi* բայական դարձվածքների իմաստային դաշտի մեջ՝ արտահայտելով մարտահրավերն ընդունելու պատրաստակամությունը:

Այսպիսով ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ **եզրակացությունները**.

1. Եղանակավորումը որպես տեքստակազմիչ կարգ, ապահովում է առանձին միավորների իմաստագործաբանական փոխկապակցվածությունը իրազեկման (*faire savoir*) և ներագդման (*faire croire*) հիմնական գործառույթների շրջանակներում: Նման մոտեցումը թույլ է տալիս բացահայտել հողվածագրի կամ ասության սուբյեկտի դիրքորոշումը, որը գնահատվում է ոչ միայն տեքստի առանձին միավորների տեսակետից, այլև հանրային գլոբալ համատեքստի համեմատ: Այս դեպքում բացահայտվում է եղանակավորման եռանիստ էությունը, այն է՝ հասցեագրողի հաղորդակցական դիտավորությունը, ինչպես նաև նրա վերաբերմունքը սեփական խոսքի և հասցեատիրոջ՝ ընթերցողի նկատմամբ:

2. Եղանակավորման միջոցների ուսումնասիրությունը **առանձին ասույթների** մակարդակում թույլ է տալիս ժամանակակից ֆրանսիական լրագրային խոսույթում եղանակավորության հիմնական տիպերին համապատասխան արձանագրել եղանակավորության հետևյալ դրսևորումները՝ փաստական, հորդորական, իմացական և սուբյեկտիվ-գնահատողական.

- **փաստական** օբյեկտիվ եղանակավորությունն արտահայտվում է սահմանական եղանակի ժամանակաձևերով, ուրիշի խոսքի մեջբերումներով, չակերտների մեջ վերցրած հղումներով, հաստատական ասույթներով

- **արտաքին և ներքին պարտադրանքի հորդորական** եղանակավորությունն արտահայտվում է *nous* անձնական դերանվան, *devoir* և *pouvoir* եղանակավորող բայերի, հոետորական հարցերի, հրամայական եղանակի միջոցով
  - **իմացական** եղանակավորությունն արտահայտվում է պայմանական եղանակի ժամանակաձևերով, այսպես կոչված լրագրողական պայմանական եղանակով, *pouvoir* և *devoir* բայերով, եղանակավորող բառերով
  - **սուբյեկտիվ-գնահատողական** եղանակավորությունն արտահայտվում է ուրիշի ուղղակի խոսքը ներմուծող բայերով, հավելիմաստային արժեք ունեցող գոյական և ածական անուններով, եղանակավորող մակբայերով, բացականչական նախադասություններով, ձայնարկություններով
3. Տեքստի իմաստային ներունակությունների և դրանց ներքին փոխկապակցվածության բացահայտման համար առանձնակի կարևորություն է ստանում **խորագրերի երկակի ներագողական գործառույթը**, որոնք հետաքրքրություն առաջացնելով տպագրված նյութի նկատմամբ, միաժամանակ նպատակ ունեն ներագղելու ընթերցողի հույզերի և հնարավոր հակադեցությունների վրա:
4. Առանձին ասույթներում արձանագրվող եղանակավորման միջոցները տեքստային քննության մակարդակում զրկվում են իրենց առաջնային եղանակավորման գործառույթից: Տեքստի ներակա մակարդակում իմաստային բաղադրության ենթարկվելով՝ ստանում են հորդորական եղանակավորության երանգավորում՝ իրացնելով եղանակավորման **տեքստակազմիչ գործառույթը**:
5. **Տեքստային ուսումնասիրության մակարդակում հորդորական եղանակավորությունը** իրականացվում է հետևյալ միջոցներով՝
- շարահյուսական զուգահեռ կառույցներ
  - զեղչված կառույցներ
  - հարակրկնություններ
  - հարցական և բացականչական նախադասություններ
  - բազմարժույթ եղանակավորիչներ, մասնավորապես *pouvoir* և *devoir* բայեր
6. Հորդորական եղանակավորման միջոցներից է *nous* անձնական դերանվան բազմարժույթ կիրառությունը **ներքին պարտադրանքի եղանակավորության** համատեքստում, որի նպատակն է ընդգծել յուրաքանչյուրի պատասխանատվությունը հանրությանը հուզող հարցերի լուծման մեջ, քանի որ գործում է *je+vous* կամ *je+les autres* տրամաբանության շրջանակներում և դրանով իսկ նպաստում է հանրային երկխոսությանն ու համախմբմանը:
7. Փաստական եղանակավորությունը չի արձանագրվում **ամբողջ տեքստի մակարդակում**, անգամ զուտ տեղեկատվական հոդվածներին



ուսումնասիրության պարագայում, քանի որ որոշակի փաստերի ընտրությունը և իրարամերժ կարծիքներ ներկայացնելը կամ դրանք լռության մատնելը ընդամենը թվացյալ օբյեկտիվ բանավեճի պատրանք են ստեղծում՝ բացահայտելով հեղինակի դիտավորությունը:

**8. Տեքստի ներակա մակարդակում** արձանագրվում են հորդորական եղանակավորման հետևյալ դրսևորումները.

- Մասնակցելու հորդորով դեոնթիկ եղանակավորում (modalité déontique participative)
- Բանավեճի հորդորով դեոնթիկ եղանակավորում (modalité déontique polémique)
- Երկխոսելու հորդորով դեոնթիկ եղանակավորում (modalité déontique dialogale)
- Ընտրություն կայացնելու հորդորով դեոնթիկ եղանակավորում (modalité déontique optative)

**9.** Խոսողական ակտերի իմաստագործաբանական ուսումնասիրության տեսակետից ֆրանսիական լրագրային խոսույթը անհերքելիորեն օժտված է **ներագողական գործառույթով**, այդ իսկ պատճառով կարող է դիտարկվել որպես կատարողական ներուժ ունեցող խոսողական ներգործական ակտ, քանի որ անուղակիորեն է ազդում ընթերցողների հնարավոր հակադեցույթյան վրա, ինչն էլ արտահայտվում է արտաքին և ներքին պարտադրանքի հորդորական եղանակավորությամբ: Ներքին պարտադրանքի եղանակավորությունը հատկորոշվում է նրանով, որ ասության սուբյեկտը և հասցեատերը (մեր դեպքում լրագրողը և ընթերցողը) չեն հակադրվում, այլ գործում են միասնաբար՝ հանրության ընդհանուր շահի գիտակցությամբ:

**10.** Քաղաքային իշխանություններին պատկանող ռեգիոնալ նշանակություն ունեցող մամուլում, ի տարբերություն համազգային թերթերի և ամսագրերի, արձանագրվում է *je* և *nous* դերանունների համակցված կիրառությունը, որի միջոցով ընդգծվում է հաղորդակցման և հանրային համախմբման կարևորությունը:

**11.** Եղանակավորման տեքստային քննությունը ոչ միայն թույլ է տալիս վերհանել հասցեատիրոջ ասության դիրքորոշումը տեքստի ներակա մակարդակում, այլև ընթերցողի հավաքական կերպարը և այն խոսույթային միջավայրը, որում իրականացվում է հաղորդակցությունը: Ֆրանսիական հանրային խոսքում առավել հաճախ կիրառվող *sensibiliser* բայը *informer* բայի փոխարեն ընդգծում է ոչ այնքան պարզապես տեղեկացնելու կամ լուսաբանելու լրատվության գործառույթը, որքան իրազեկելու, քանի որ այս դեպքում ակնհայտ է հասցեատիրոջ՝ իրազեկված քաղաքացու հանրային պատասխանատվության հանգամանքը, որը բնորոշ է հատկապես մասնակցային ժողովրդավարությունն արժևորող ժամանակակից ֆրանսիական լրագրային խոսույթին:

**Ատենախոսության հիմնադրույթներն** արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. «Pouvoir» և «devoir» եղանակավորող բայերի բազմիմաստությունը լրագրողական խոսույթում // *Աշխարհի լեզվական պատկերը ֆրանկոֆոնիայի շարափվա շրջանակներում կազմակերպված 6-րդ և 7-րդ միջազգային գիտաժողովների նյութեր*, Երևան, «Լինգվա» հրատ., 2015, էջ 260-268:
2. Լրագրողական էթոսի լեզվական դրսևորումները ժամանակակից ֆրանսիական մամուլում // *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում 2(23)*, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 2017, էջ 63-71:
3. Դեռնթիկ եղանակավորության դրսևորման մակարդակները լրագրային խոսույթում // *Կանթեղ*, Երևան, 2018, էջ 84-92:
4. Միջտեքստային մեջբերումը որպես եղանակավորման միջոց // *Բանբեր 1 (44)*, Երևան, «Լինգվա» հրատ., 2018, էջ 302-309:
5. Ֆրանսերենի բայական եղանակների մոդալ արժեքների որոշ առանձնահատկություններ ժամանակակից լրագրային խոսույթում // *Բանբեր 1 (62)*, Երևան, «Լինգվա» հրատ., 2022, էջ 160-171:
6. Եղանակավորող բառերն ու արտահայտությունները որպես հեզնանքի դրսևորման միջոց արդի ֆրանսիական մամուլում // *Մանկավարժական միտք 1-2 (78-79)*, Տաթև գիտակրթական համալիր, Երևան, «Զանգակ» հրատ., 2022, էջ 450-458:
7. Ալեթիկ եղանակավորման ներակա դրսևորումները ֆրանսիական լրագրողական խոսույթում // *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում 2(33)*, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 2022, էջ 23-29:

Тадевосян Сюзанна

**Семантико-синтаксические средства выражение модальности в современном французском журналистском дискурсе**

**РЕЗЮМЕ**

Данная диссертация посвящена дискурсивному анализу семантических и синтаксических средств выражения модальности в современной французской прессе.

Объективная и непредвзятая журналистика, имея своей целью распространение достоверной информации, оставаясь в рамках алетической модальности, на имплицитном уровне текста неизбежно обнаруживает коммуникативную интенцию автора, раскрывая степень его субъективной причастности в процессе смыслообразования и смысловосприятия, что обуславливает **актуальность** исследования языковых способов выражения модальности в контексте соотношения лингвистических реалий и внеязыковой действительности.

**Научная новизна** диссертации состоит в выявлении текстообразующей функции алетической, деонтической, эпистемической и субъективно-оценочной модальности во французском журналистском дискурсе на эксплицитном и имплицитном уровнях смыслообразования с учетом особенностей восприятия текста на основе прагмасемантического и семантико-функционального анализа языковых значений.

**Целью** данного исследования является выявление лингвистических средств выражения основных типов модальных значений, выражающих авторскую интенцию в общественно значимом журналистском дискурсе.

Поставленная цель обуславливает решение нижеследующих **задач**:

- Изучение лингвистической манифестации основных типов модальности: алетической, деонтической, эпистемической, реализуемых в журналистском дискурсе соответственно в качестве фактической, побудительной и познавательной модальности.
- Изучение языковых средств выражения нейтральной позиции автора и их соотношения с модальностью субъективной оценки и воздействия на адресата.
- Изучение особенностей текстовой модальности с точки зрения смыслообразования и смысловосприятия отдельных сегментов текста.
- Выявление специфики французского журналистского дискурса с точки зрения соотношения информативной и коммуникативной функций текста.

**Объектом** исследования являются основные типы модальности в журналистском дискурсе с учетом присущей ему внутренней противоречивостью, которая проявляется, с одной стороны, в необходимости безукоризненного соблюдения правил профессиональной этики, и, с другой стороны, в неизбежности выражения субъективной позиции автора на имплицитном уровне текста. Материалом исследования послужили редакционные и информационные статьи, опубликованные в ведущих французских журналах общенационального и регионального значения (L'Express, Le Monde, Le Point, Marseille/infos).

**Предметом** изучения является прагмасемантическая и семантико-функциональная значимость средств выражения фактической, побудительной, познавательной и субъективно-оценочной модальности в современной французской прессе.

В ходе диссертационного исследования были применены следующие **методы** анализа: ономаσιологический, семаσιологический, компонентный, сопоставительный, метод контекстного анализа а также метод словарных дефиниций, позволившие, в частности, выявить языковые формы выражения деонтической модальности внутреннего и внешнего воздействия, а также суггестивную, партисипативную, диалогическую, оптативную и полемическую функции побудительной модальности.

**Теоретическая значимость** исследования обусловлена изучением модальности в журналистском дискурсе в качестве текстовой категории на основе результатов исследований, проведенных с привлечением прагмасемантического, семантико-функционального и семиотического методов анализа.

**Практическая значимость** данной работы обуславливается возможностью использования результатов данного исследования в ходе теоретических и практических занятий по французскому языку для выявления имплицитных языковых механизмов, обнаруживающих интенциональность позиции автора в ходе смысловосприятия на уровне текста.

Tadevosyan Syuzanna

**Semantic-syntactic Means of Expressing Modality in Modern French  
Journalistic Discourse**

**SUMMARY**

The present study is devoted to the analysis of semantic and syntactic means of expressing modality in contemporary French press. Objective and unbiased journalism, aiming at distributing reliable information, remains within the framework of alethic modality. The communicative intention of the author is detected on the implicit level of the text, revealing the degree of his/her subjective involvement in the process of meaning formation, which determines the **relevance** of the study of linguistic ways of expressing modality in the context of linguistic and extra-linguistic realities.

**The novelty** of the dissertation lies in the identification of the text-forming function of alethic, deontic, epistemic and subjective-evaluative modality in French journalistic discourse on the explicit and implicit levels of meaning formation, considering the peculiarities of text perception based on pragmasemantic and semantic-functional analysis of linguistic meanings.

**The objective/goal of the research is** to identify most relevant modal meanings in linguistic units that express the author's intention in socially significant journalistic discourse. The mentioned objective is achieved through

- The study of linguistic manifestation of the main types of modality (alethic, deontic, epistemic) realized in journalistic discourse, as factual, motivating and cognitive modality.
- The study of linguistic means of expressing the author's neutrality, their relationship with modality of subjective assessment and impact on the addressee.
- The study of text modality from the point of view of meaning formation and acquisition of individual text segments.
- The disclosure of French journalistic discourse peculiarities within the frames of the relationship between the informative and communicative functions of the text.

**The object** of the investigation is the main types of modality in journalistic discourse, and their inherent internal inconsistency, which is manifested on the one hand by impeccable compliance with the rules of professional ethics, and on the other – the inevitability of the manifestation of the author's subjective position on the implicit level. The research material includes editorial and informational articles published in leading French magazines of national and regional importance (L'Express, Le Monde, Le Point, Marseille/infos).

**The subject** of study is the pragmasemantic and semantic-functional linguistic means that express factual, incentive, cognitive and subjective-evaluative modalities in contemporary French press.

The following **methods of analysis** have been used: the onomasiological, and semasiological methods, the methods of comparative and contextual analysis the component and dictionary definitions methods. The mentioned methods allow to identify the linguistic forms of expression of deontic modality of internal and external influence, as well as suggestive, parsipative, dialogical, optative and polemical functions of incentive modality.

**The theoretical value** of the research is expressed in the assertion (backed up by pragmasemantic, semantic-functional and semiotic analyses carried out in the investigation) that journalistic discourse is an important text category.

**The practical value** of the research is determined by the possibility of using the results of the present study in theoretical and practical classes of French to identify implicit linguistic mechanisms that reveal the intentionality of the author's position in the course of meaning perception on the text level.

A handwritten signature in black ink, appearing to read 'T. G. G. B.' with a stylized flourish at the end.



